

ՉԱՐԵՆՑ ԵՎ ՆԻՑՅԵ.
ԱՇԽԱՐՀԸՆԿԱԼՄԱՆ ՈՐՈՇ ԸՆԴՀԱՆՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ն. Ա. ՂԱԶԱՐՅԱՆ

Չարենցի կյանքն ու ստեղծագործությունն ուսումնասիրող գիտնականները վկայում են, որ նա ստեղծագործական կյանքի հենց սկզբում քաջածանոթ էր ոչ միայն համաշխարհային գրականության, այլև փիլիսոփայական մտքի նվաճումներին: Հայտնի է նաև, որ բանաստեղծի փիլիսոփայական-գեղագիտական հայացքների վրա հատկապես մեծ ազդեցություն է թողել գերմանացի փիլիսոփա Ֆրիդրիխ Նիցշեն իր՝ «Այսպես խոսեց Ջրադաշտը» ստեղծագործությամբ: Բազմաթիվ են երկու ստեղծագործողների երկերից քաղված այն հատվածները, որոնց համեմատության ընթացքում վեր են հանվում մի շարք ընդհանրություններ՝ թե՛ գեղարվեստական մտածողության, թե՛ փիլիսոփայական ընդհանրացումների ու գնահատականների տեսանկյունից: Ահա այդպիսի մի համեմատության օրինակ.

Միայն հիմա՝ ես դու գնում քո մեծության ուղիով:
Բարձունքն ու անդունդը միաձուլված են քո մեջ.
Ինչը մինչ այժմ մեծագույն վտանգ է եղել քեզ համար,
հիմա քո վերջին ու ամենահույսալի

հանգրվանն է դարձել:

Ֆրիդրիխ Նիցշե, «Այսպես խոսեց Ջրադաշտը»՝

...Երգս քեզ եմ ձոնում, ո՛վ ճանապարհորդ,
Ո՛վ անհայտ հորիզոնների զննիչ,-
Ընթացի՛ր, զնա՛ քո ուղի՛ն, և որքան այն քարքարոտ,
Այնքան անվհատ ոգիդ, և կարոտդ՝ աննի՛նջ:

Ե. Չարենց, «Գիրք իմացության»²

Պատկերային առումով ոչ նույնական, սակայն մտքի կառուցման ոճով բավականին նույնատիպ մտածողության երկու մնուշ, որոնց համեմատության ընթացքում հեշտությանը վեր են հանվում երկու խոշոր մտածողների՝ իրականության պատկերման երկու սկզբունքները: Առաջինը *հակադրությունն է*, որը ոչ միայն աշխարհի գոյատևման հիմքն ու պայմանն է, այլ նաև մտածող մարդու ներքին տարամիտվածության դրսևորումը, մարդու և աշխարհի միջև եղած հակադրությունը, որի արդյունքը մաքառումների միջով դեպի ճշմարտությունը և ճանաչողությունը տանող ուղու որոնումն է: Մյուսն *իմացության և ճանապարհի* զուգահեռն է, դրանց փիլիսոփայական-գեղագիտական-հոգեբանական ընդհանրության գիտակցումը, որ գրեթե նույնքան հին է, որքան ինքը՝ փիլիսոփայությունը, որքան մարդու բնական ու հասկանալի իմացական պահանջմունքը: Ծանաչել աշխարհը՝ գրեթե միշտ նշանակել է անցնել մի անվերջ ու անհանգրվան ճանապարհ. անվերջ, քանզի իմացության պրոցեսը հակասական է. շատ գիտելիքը միշտ էլ քիչ գիտելիքի համոզմունք է ծնում, քանզի միտքը երբեք հանգիստ չի ունենում:

Փիլիսոփա բանաստեղծն ու բանաստեղծ փիլիսոփան սա շատ խորությամբ են հասկանում, և դա հավասարապես նրանց երջանկության, դժբախտության ու բացառիկության պայմանն է...

¹ Фридрих Ницше. Сочинение в 2-х томах. Т. 2, М., 1990, с. 108. Հետագա մեջբերումները արված են նույն աղբյուրից:

² Եղիշե Չարենց, Երկերի ժողովածու 4 հատորով, հ. 3, Եր., 1986: Հետագա մեջբերումները արված են նույն աղբյուրից:

Չարենցագետները, ուսումնասիրելով բանաստեղծի կենսագրության բոլոր դրվագները, վկայում են. «10-ական թթ-ին, որպես ընթերցանության առաջին գրքեր, ասպարեզի վրա էր Պշիբիշևսկին՝ «Homo Sapiens»-ը, Ֆրիդրիխ Նիցշեն՝ «Այսպես խոսեց Ջրադաշտը», Օտպենհայմերը՝ «Հոգու ամմահություն»-ը..., որոնք գրավում էին անառագաստ ու անդեկ, դեռ որոշակի և կայուն հասարակական դավանանք չունեցող, բայց և անկասելի մի մղումով կյանքի իմաստը՝ կեցության «վերջնական ճշմարտությունը» որոնող երիտասարդությանը»¹։ Հայտնի է նաև, որ սրանցից ամենամեծ ազդեցությունը Չարենցի վրա ունեցել է Նիցշեն, հատկապես «գերմարդու իր կողմըսով» և ապա բազմաթիվ այլ պորբլեմների արծարծմամբ և դրանց փիլիսոփայական վերլուծությանը ու ընդհանրացումներով։ Ազդեցության առկայությունը, ինչ խոսք, միանշանակ է։ Սակայն մենք կփորձենք պարզել գերմանացի իդեալիստ փիլիսոփա Նիցշեի հայացքների և մտածողության ազդեցության չափը Չարենց բանաստեղծի և Չարենց փիլիսոփայի վրա՝ հասկանալով, իհարկե, որ ազդեցության չափը որոշելը արվեստի, գրականության և փիլիսոփայության մեջ, մեղմ ասած, անճորհակալ գործ է։ Սակայն նպատակն արդարացնում է նման անճորհակալ և կոնկրետությունից զուրկ խնդրի իրականացումը. մենք համոզված ենք, որ Նիցշեի ծայրահեղ հոռետեսական և տեղ-տեղ ակնհայտ մարդասոյաց փիլիսոփայությունը Չարենցի նման մտածողի և բանաստեղծի վրա բարենպաստ ազդեցություն է թողել և ուժեղացրել նրա ստեղծագործության լավատեսական և մարդասիրական շեշտերը։ Եվ սա, ըստ էության, գալիս է նրանից, որ Նիցշեի փիլիսոփայության ծայրահեղ միջոցով ու իրացիոնալիզմ էլ չպետք է ընկալել միանշանակ, ինչպես դա արվել է ոչ վաղ անցյալում՝ գաղափարախոսական միագիծ կուսակցականության պայմաններում, երբ այս փիլիսոփայի մասին մենք պատկերացում ունեինք զուտ պատմողաբար, իսկ նրա լավագույն գործերից մեկը՝ «Այսպես խոսեց Ջրադաշտը», արգելված էր։ «Ջրադաշտը» փոքր-ինչ ավելի համազամանալից ուսումնասիրելով մենք համոզվում ենք, որ շատ դրոյթներ զուրկ չեն գիտականությունից, իսկ նրա գլխավոր գաղափարական կրող գերմարդը՝ աշխարհի երկու հակադիր բեռերի ու մարդկային գարգացման հավթոժական միտումների այդ մշտական խոսքումը, դիմանում է նույնիսկ բարու գերադասելիության դիրքերից արվող ամենախիստ քննադատությանը։ Ահա թե ինչու Նիցշեի և մասնավորապես Ջրադաշտի ազդեցությունը մենք ընկալում ենք իբրև «չար հանճարի» (եթե հանճարը փիլիսոփայության մեջ առհասարակ կարող է չար լինել) բարենպաստ ազդեցություն «բարի հանճարի» վրա։ Իհարկե, մենք սա ասում ենք այս՝ համեմատական ուսումնասիրության շրջանակներում, իսկ ընդհանուր առմամբ մեծ վերապահումով պետք է նշել, որ Չարենցի սիմվոլիստական շրջանը կրում էր Նիցշեի փիլիսոփայության հոռետեսական շեշտը, գերմարդու մերժողական կեցվածքը, և որ Չարենցն ավելի ուշ շրջանում հաղթահարել է կամ փորձել է հաղթահարել այս ամենը։ Նիցշեական փիլիսոփայությունը՝ անցած չարենցյան մտածողության ինքնատիպ պրիզմայով, անընդհատ դրական առումով իրեն զգացնել է տալիս՝ ուժեղանալով կամ թուլանալով ստեղծագործության այս կամ այն առանձին շրջանում, հասարակական-պատմական, անձնական ու համամարդկային այս կամ այն խնդրի փիլիսոփայական մեկնաբանության մեջ։

Մեր խնդիրը թեմատիկ ընդհանրությունների վերհանումը չէ. ի վերջո դա կարելի է գտնել ցանկացած երկու և ավելի մտածողի ու փիլիսոփայի միջև։ Չէ՞ որ ի վերջո համամարդկային ասպեկտով բոլոր փիլիսոփաներին նույն խնդիրներն են հուզում, և բոլոր ժամանակներում նույն պրոբլեմների մեջ են նրանք խորամուխ լինում՝ կյանքի իմաստի, մահվան, երջանկության, գեղեցիկի, ճշմարտության և բազմաթիվ այլ հավերժական պրոբլեմներ, որոնք չեն ճանաչում ոչ մի տարածաժամանակային սահման։ Չարենցի և Նիցշեի տվյալ պրոբլեմի արծարծման ձևի և ծավալի, նրա փիլիսոփայական իմաստավորման սկզբունքի ընդհանրությունն է, որը դրսևորվում է մասնավորապես «Ջրադաշտում», և որը շատ ավելի հեռուն է գնում «ընդամենը ամացությունից»։ Ասվածը հիմնավորել կարելի է շատ ու շատ օրինակներով, սակայն այս ուսումնասիրության շրջանակներում մենք կբավարարվենք մի քանի բնորոշ օրինակներով։

¹ Ս. Աղաբաբյան, Եղիշե Չարենց, Եր., 1973, թ. 1, էջ 28:

Զարեանցի «Երեք երգ տխրադալով և աղչկան», «Տեսիլածամեր», «Միածան» շարքերը սովորաբար դիտվում են իբրև ստեղծագործության առաջին՝ սիմվոլիստական շրջանի տիպիկ դրսևորումներ: Եվ սա համոզիչ է, քանզի այստեղ մեծ թիվ են կազմում սիմվոլիզմը, առկա է իրական և ոչ իրական աշխարհների տարաբաժանվածության զգացումը, և հայտնի է այն հանգամանքը, որ Զարեանցի գրական հանճարն այդ փուլում «սնվում էր» համաշխարհային սիմվոլիզմից (Սամեն, Վերհարն, դ'Աուուցիո և այլք): Սակայն չպետք է մոռանալ որ աշխարհընկալման պակաս զգայական՝ գաղափարական հողը միջշեական փիլիսոփայությունն էր, որը նախնական շրջանում սիմվոլիզմի հետ մեկտեղ կազմում է մի ուրույն որակ, ապա ստեղծագործության ավելի ուշ շրջաններում զտվում է սիմվոլիզմի՝ ձեռք բերելով մեկ այլ, ոչ պակաս յուրահատուկ որակ:

Նիցշեի ազդեցությունը Զարեանցը կրել է ոչ միայն ստեղծագործության առաջին շրջաններում, և այդ իդեալիստ փիլիսոփայի մտածողության հետքը ոչ միայն 10-ական թվականների գործերի վրա պիտի փնտրել, այլև պետք է փաստել, որ պարզապես այս շրջանի վրա է ամենամեծ ազդեցությունը: Որոշ ստեղծագործություններում ակնհայտ ընդհանրություններ կան և՛ մտածողության ձևերում, և՛ պատկերային համակարգի առանձին տարրերում: Մտածողության կերպի այդ «կրկնօրինակումը» առաջին շրջանում է խիստ տեսանելի, մի հանգամանք, որ բացատրվում է դեռևս կենսափորձի և գեղարվեստական փորձի պակասությամբ, իսկ երբեմն էլ՝ բացակայությամբ: Սակայն միջշեական մտածողության դրական, բարենպաստ ազդեցությունը (իր հզորությամբ, համապարփակությամբ, համարձակությամբ և ծայրահեղության հասնող հակադրության ոգով) պահպանվում է Զարեանցի հետագա ողջ ստեղծագործության վրա՝ աստիճանաբար ձեռք բերելով երկու խոշոր արվեստագետների մտածողության համադրույթի շատ էական ու հետաքրքիր գծեր ու դրսևորումներ: Սրանում համոզվելու համար բավական է հիշել թեկուզ միայն իմաստունի կերպարը, որին ընդամենը կերպար անվանելով գուցե ամբողջությամբ չենք ներկայացնի նրա էությունը: Իմաստունը, որին առաջին անգամ հանդիպում ենք «Ջրադաշտում», իրոք, որոշ առումով գրական կերպար է, ինչպես որ իր պատկերավոր լեզվով և գեղարվեստական կատարելությամբ «Այսպես խոսեց Ջրադաշտը» կարող է նաև գրական գործ դիտվել: Ջրադաշտը՝ պարսից հնագույն կրոնի գաղափարական հիմնական ծայրակետերը (բարու և չարի ըմբռնումները) ներկայացնող այս հերոսը, «կրում է բնավորության և վարքագծի որոշակի հատկանիշներ... բնության, մարդկանց և առարկայական աշխարհի տեսարանների առնչություններով բացահայտվում են նրա (կերպարի, - Ն. Ղ.) յուրահատկությունները»⁴, սակայն Նիցշեի երկում Ջրադաշտը կ' գեղարվեստական կերպար է և այդ իմաստով գեղարվեստական սկզբունքների կրող, և՛ մտածող է՝ որոշակի փիլիսոփայության, բարոյական սկզբունքների արտահայտիչ: Զարեանցի գործերում ևս այս համատեղումը առկա է. իմաստունը բանաստեղծի գեղագիտական փիլիսոփայական ըմբռնումների խտացված արտահայտությունն է, որն ուղեկցում է երկու խոշոր մտածողների որոնումներին ու աշխարհաճանաչման փորձերին՝ սկզբից մինչև վերջ: Նա տանում է մեզ դեպի կենսափիլիսոփայական երկար որոնած ճշմարտություններ, դեպի գերճշմարիտ ընդհանրացումների մտահասանելի վիճակներ: Ծանոթանալով նրա հետ «Ջրադաշտ»-ում (ստեղծագործության առաջին շրջան), Զարեանցը նաև հետագայում է նրա հետ կիսում իր՝ արդեն կյանքի երևույթների խոր ճանաչումից ծնված համոզմունքները, հիասթափություններն ու կասկածները, նրան է ուղղում իր՝ այդպես էլ պատասխան չստացած հարցերը (ստեղծագործության վերջին շրջան՝ «Գիրք ճանապարհի», «Գիրք իմացության», փիլիսոփայական ռուբայիներ):

Նիցշեի իմաստուն Ջրադաշտը տալիս է հարցեր, որոնում պատասխաններ, իսկ բանաստեղծը ընդունում է նրա մատուցած ճշմարտությունները՝ ավելացնելով նաև ի՛ր հարցադրումներն ու փիլիսոփայական եզրահանգումները.

Ի՞նչ թունդ է քո գինին, իմաստուն, նրանից իմ հոգին հարբում է.

Դե գինի՞՛ է, թե խո՞սք է ազդու. նրանից իմ հոգին հարբում է.

Դու ասիր՝ նայել, հասկանալ, ու սուզվել, դառնալ անէ (սա իմաստունն է, - Ն. Ղ.),

⁴ Էդ. Ջրբաշյան, Գրականության տեսություն, Եր., 1980, էջ 140:

Նա ասաց՝ լինել, կատարել, ներծծել հուրեր ու շողեր (սա ինքն է, - Ն.Ղ.)
Դու ասիր՝ ամփոփել ամբողջը, հաշտվել ու խաղաղ լինել (սա իմաստունն է, - Ն. Ղ.),
Նա ասաց՝ ամբողջին տիրանալ, որպեսզի ամբողջը - փոխել (սա ինքն է, - Ն.Ղ.):

Դժվար չէ գկատել, որ սա ոչ միայն հակադրության գեղարվեստական հնարքներով կառուցված բանաստեղծական խոսք է, այլև իրականության գկատմամբ հակադիր (պասսիվ և ակտիվ) մոտեցումների դրսևորում, որով բանաստեղծ-փիլիսոփան լրացնում է «հայեցումով իմացության կաթսան դատարկող» իմաստունին:

Ծանապարհի փիլիսոփայական «կերպարը» թեև այսպես թե այնպես կարող էր հայտնվել Չարենցի պոեզիայում՝ պայմանավորված թե՛ նրա ստեղծագործական խառնը-վածքով, թե՛ անհատականության տեսակով և թե՛ հայրենիքի ու ժողովրդի պատմական ճակատագրով (սկսած «Դանթեական առասպելից» մինչև «Դատմության քառուղիներ»), սակայն համոզված ենք, որ ճանապարհի սիմվոլիկան ամենից առաջ «Զրադաշտի» միջոցով է մուտք գործում Չարենցի պոեզիայի մեջ, Զրադաշտի հայտնագործած բոլոր ճշմարտությունները ի վերջո ճանապարհ գնալու, աշխարհը իր տարբեր իրավիճակներով տեսնելու, մարդկային ցեղին բնորոշ բոլոր թուլություններին ու շնորհներին հաղորդակից լինելու - գնահատելու արդյունքն են: Զե՞ որ Զրադաշտն ամենից առաջ մի անկողմնակալ ճանապարհորդ է, որ գնում է փնտրելու յուրաքանչյուր ճանապարհորդի բարձրագույն նպատակը հանդիսացող «չեղծված իմացությունը»: Զրադաշտը շատ ու շատ բան է տեսնում, բայց կշռադատելու համար ընտրում է կտրուկ անցումները, հակադիր ու հակասող իրավիճակները և հենց դրանցով է հասնում իր փիլիսոփայական ընդհանրացումներին: Օրինակ, մի մեծ ու աղմկոտ քաղաքում նա հանդիպում է մի լարախաղացի, որ զվարճացնում է մարդկանց: Մարդիկ հրճվանքի մեջ են և գովերգում են լարախաղացին, բայց հանկարծ նա վայր է ընկնում և ջարդուփշուր լինելով մեռնում: Մարդկանց անմիջապես համակում է վրդովմունքը, ապա ատելությունը (քանի որ նրանց ուրախությունն ընդհատվում է), այնուհետև՝ անտարբերությունը: Զրադաշտը հասկանում է, որ մարդու մեջ չարի ու բարու պայքարում հաղթողը չարն է: Հետագայում համամասն ապրումներ է ունենում չարին դեմ հանդիման հայտնված բանաստեղծը. բազմաթիվ ստեղծագործություններում միջավայրի և անձի հակադրության բանաստեղծական ընդհանրացման շատ ու շատ օրինակներ կան, որոնց ընդհանուր ուղղվածությունը «Ախ, թե մարդ եք ախ դուք, չե՞ք տեսնում մարմինն ծվատ...» բնույթի ու կառուցվածքի դատողություններն են: Սա մի անգամ ևս հիմնավորում է մեր այն կարծիքը, թե Նիցշեի գաղափարները ուղեկցել են Չարենցին և ինչ-որ չափով օգնել հասնելու այն գեղագիտական իդեալին, որը բանաստեղծին պաշտպանել է ճղճիմ միջավայրի հարձակումներից: Այս միտումը դրսևորվում է նույնիսկ այն-պիսի մի՞ թվում է առաջին հայացքից միջցեական իդեալիզմի հետ ոչ մի կապ չունեցող բանաստեղծական շարքում, ինչպիսին է «Տաղարանը»: Բավական է անդրադառնալ թեկուզ «Երբ այս հին աշխարհը մտա ես...» ստեղծագործությանը, որի լիրիկական հերոսը, որը հենց ինքը բանաստեղծն է, միայնակ է, լքված է և չհասկացված, քանի որ ավելին է ու բարձր է իր միջավայրից («...Մարդիկ ծածաղում են գերմարդու վրա, քանզի նա արդեն գտել է իր ուղին, իսկ իրենք նրան ընկալում են իբրև ուղուց շեղվածի», - Նիցշե, «Այսպես խոսեց Զրադաշտը»): Բայց այս՝ արտաքուստ խղճահարություն առաջացնող վիճակի մեջ կա հպարտություն և սեփական գերազանցության համոզմունքը. «Դարերի հիացմունքը վսեմ Տաղերիդ համար է, ասին»:

Չարենցի ստեղծագործության առաջին շրջանին բնորոշ սիմվոլիզմը, որի փիլիսոփայության հիմնական դրույթներից մեկը աշխարհի երկփեղկվածությունն է զգայականի և իդեալականի, նույնպես իր գաղափարական հիմքերն ունի «Զրադաշտի» մեջ: Երբ Զրադաշտը խոսում է քնի մասին, այն նրա համար մի յուրահատուկ անցում է առաջին աշխարհից դեպի երկրորդը: Դա ուղի է դեպի հոգու և մարմնի լիակատար հանգստություն (ոչ մարմնավոր իմաստով, իհարկե), որի պայմանը ճշմարտությունը ճանաչած լինելն է: «Իմաստությունը քուն է՝ առանց երազների: Իմաստունը երազ չի տեսնում, քանի որ նրա համար այս և այն աշխարհները նույնական են այլևս (սա ասում է Զրադաշտը)»: Եվ ահա անհանգիստ խառնվածքով հանճարեղ պատանու՝ իմացության ծարավ ու պրպտուն միտքը ձգտում է հասնել այս երանելի վիճակին: Գորշ ու կոպիտ իրականությունն, իհարկե,

խոչընդոտում է դրան, և թերևս այդպես է ծնվում անհանգիստ քնի ու հաճախ էլ անքնության թեման, որն ուղեկցում է չարենցյան բանաստեղծական ու փիլիսոփայական մտածողությանը՝ քառորդ դար շարունակ (Գիշերը ամբողջ հիվանդ, խելագար՝ ես երագեցի արևի մասին... Քնել չի լինում, հիմա, երբ այնպես ուզում եմ քնել, ամեն, ամեն ինչ մտքիցս հանել, Քնել չի լինում... Եվ իհարկե, անքնության դասական նմուշ «Անքնություն» բանաստեղծությունը՝ գրված շատ ավելի ուշ. «Դոփում եմ, դոփում եմ, դոփում եմ ձիերը... »): Եթե մի կողմ դնենք ճակատագրով բանաստեղծին բաժին հասած տարաբնույթ հարվածներն ու հալածանքները, որոնք կարող էին ծնունդ տալ այս և այս բնույթի բազմաթիվ այլ բանաստեղծությունների, միջոցական փիլիսոփայության տեսանկյունից դրանք նաև կարող էին ծնվել իմացության այն բուռն ձգտումից, որ հատուկ էր Չարենց-բանաստեղծին և Չարենց-մտածողին:

Բավականին հետաքրքիր առնչություններ են ի հայտ գալիս նաև քառսի և ոչ քառսի, պատերազմի և խաղաղության, ազատության, կամքի և բազմաթիվ այլ փիլիսոփայական կատեգորիաների ու երևույթների մեկնաբանության սկզբունքների միջև, որոնցով դրսևորվում է երկու մտածողների աշխարհընկալման, կուռ տրամաբանության և ինտելեկտուալ օժտվածության ընդհանրությունը:

Սակայն խոսել Նիցշե-Չարենց փիլիսոփայական առնչությունների մասին և փոքր-ինչ ավելի հանգամանորեն չանդրադառնալ այնքան չարչրկված՝ «գերմարդու» կողեքսին, որի համար Չարենցն այնքան քարկոծվել է և օտարացվել համահավասարողական գաղափարներով առաջնորդվող հասարակությունից, կնշանակեր անտեսել այդ առնչություններից ամենահատկանշականը:

«Այսպես խոսեց Ջրադաշտը՝ փիլիսոփայական երկով Նիցշեն ներկայացրեց մի իդեալական էակի, որն ավելին էր, քան մարդը: Դա գերմարդն էր: Չարենցը, որ հայտնվել էր գավառական մի խուլ քաղաքում ու իր մեջ կրում էր դեռևս իր համար էլ անծանոթ հոգևոր լիցքեր, ողջունեց գերմարդուն անվերապահորեն՝ ձգտելով ամբողջությամբ ընդօրինակել նրան.

Երազվում էր նրան տիտանական մի մարդ,
Որի հոգին, մտքերը, տենչերը
Վիթխարի են, ամեն ինչ խորտակող,
Որը բարձր է իր բութ շրջապատից,
Ինչպես ճահճից - էլբրուսը...

Սակայն հետագայում Չարենցը ստեղծեց գերմարդու իր «մոդելը»՝ շատ ավելի կատարյալ, շատ ավելի ներդաշնակ մարդու և բնության հետ ու շատ ավելի կարևոր առաքինությունների կրող: Իսկ որ մեր կարծիքով ամենաշակունց է, չարենցյան գերմարդու մեջ ծանրության կենտրոնը գալիորեն թեքված է դեպի բարին: Ահա թե ինչու Չարենցի և Նիցշեի գերմարդը հիմքում արդեն տարբեր երևույթներ են: Դա երևում է առաջին իսկ համեմատությունից: Նիցշեի հերոսի մեջ գերակշռողը չարն է, քանի որ չարն է նրա հզորության պայմանը: Չարի առկայությունը գերմարդու մեջ պարտադիր է, քանի որ այդ նա է ծնում ուժի, պայքարի ոգին և հիմը, նեխածը, ձանձրալին նորով ու թարմությամբ փոխարինելու պահանջը: Իսկ հատուկ է արդյոք նրան բարին: Այո՛, բայց այնքանով, որքանով որ այն հակադրության պարտադիր կողմ է (բայց ոչ հակակշիռ, քանի որ չարը գերիշխող է):

Նիցշեն նախ քերում է մարդու և ծառի համեմատությունը («Նրանք ունեն ընդհանրություններ. երկուսն էլ ձգտում են վեր բարձրանալ, բայց չեն կարող պոկվել-ազատվել հողից), ապա և մեծավոր ծառի և մյուս ծառերի զուգահեռը: Մեծավոր ծառը, որ գերմարդն է, սպասում է առաջին ամպրոպին, իր շոնդալից վախճանին, քանի որ ամենից բարձրն ինքն է, նա իրեն է համարում առաջին և ամենաուժեղ հարվածին արժանի: Նա իրեն վեր է դասում մյուսներից:

Գերմարդու բարդույթը, որ շատ ուսումնասիրողների կարծիքով խիստ ընդգծված է Չարենցի ստեղծագործության սկզբում, ապա այնուհետև ուժեղանում և թուլանում է իր գեղարվեստական դրսևորումների մեջ, չարենցյան մարմնավորմամբ անշուշտ դրականի գերակշռումով է ներկայանում: Դրա վկայությունը կարող է լինել «Մահվան տեսիլը»:

... թող ոչ մի զոհ չպահանջվի ինձնից բացի,
Ուրիշ ոտքեր կախադանին թող մոտ չգան...

Այստեղ Ռինակյան մոտիվը հայրենասիրությունն է, ժողովրդի պայծառ ապագայի համար զոհվելու պատրաստակամությունը (որն իսպառ բացակայում է Նիցշեի հերոսի մեջ), բայց ինչ-որ տեղ նաև՝ սեփական անձի բացառիկության գիտակցումը, քանի որ ամեն մի անհատի ֆիզիկական կործանումով չէ, որ կարող է հայրենիք կամ ժողովուրդ փրկվել:

Նիցշեի գերմարդը տառապում է միհիլիզմով. նա ձգտում է ոչնչացնել ամեն ինչ («Ամեն ինչ էլ արծե՛, որ ոչնչանա»): Նա մերժում է պետության գաղափարը («Ռոտեղ ավարտվում է պետությունը, սկսվում է մարդը, և երևում են դեպի գերմարդը տանող կամուրջները»), նա քամահրում է իմաստուններին («Դուք ծառայել եք ամբոխին, ոչ թե ճշմարտությանը: Իշխողները ամեն անգամ օգտագործել են ձեզ, երբ ուզեցել են կարգավորել հարաբերությունները ամբոխի հետ: Դուք այն ավանակներն եք, որոնց գցում են ձիերից առաջ: Դուք բեռնակիր եք, եթե անգամ ձեր շղթաները ոսկուց են»): Նիցշեի գերմարդը զգուշացնում է կարեկցանքից («Դրանով դուք ավելի վնասում եք ձեզ և նրան, ում կարեկցում եք»), սիրուց («Դուք սիրելով փորձում եք ստրկացնել ձեր սիրո առարկային, բայց արդյունքում ինքներդ եք ստրուկ դառնում»)՝ առաքինությունները համարելով «ճահճում անշարժ մատելու» պատճառ և հետևանք, մերժելով ամենայն դրականն ու մարդասիրականը:

Չարենցը չի կիսում Նիցշեի այս ծայրահեղությունները. Նիցշեի՝ հայրենիքից գուրկ գերմարդուն նա հակադրում է հայրենիք ունեցող և այն անսահման սիրող գերմարդուն («Օ, իմ հեռու՛, կապուտաչյա սիրուհի...» և հայրենիքին մվիրված բազմաթիվ այլ բանաստեղծությունները), նա սիրում է մարդուն, նա հավատում է նրա բանականության ուժին՝ հետևաբար և՛ «կեցության կատարյալ ճանաչողությանը» հասնելու նրա երազանքին: Աշխարհի ու մտքի քառսին Չարենցը հակադրում է աշխարհի ու մարդու կատարյալ ներդաշնակությունը, որի բանաստեղծական մարմնավորումը մենք տեսնում ենք ուրբայաթներում և «Իմացության գրքի» տարբեր ստեղծագործություններում: Դիտարկելով Չարենցի ստեղծագործության տարբեր շրջանները, համոզվում ենք, որ Նիցշեի փիլիսոփայությունից Չարենցի ստեղծագործությանն անցած գերմարդու կողքսի մեջ Չարենցի համար ամենից ընդունելին կամքն է, բայց ոչ այն կամքը, որ անգիտակցաբար ձգտում է ամեն ինչ կամ ոչնչացնել կամ ենթարկեցնել (այսինքն՝ կամքն իբրև իռացիոնալ ապրում), այլ շրջապատից վեր բարձրանալու և պատմական կարևոր առաքելություն իրականացնելու ձգտումը, որի մեջ կա առաջին հերթին մվիրում ու նպատակ և նոր միայն՝ այդ նպատակի իրականացման «մենաշնորհը» սեփական անձին վերագրելու «համարձակություն»: Ահա այսքանով է միայն դրսևորվում բացառիկության այն զգացողությունը, որի համար փորձել են մեղադրել բանաստեղծին.

Ներքևում ահա, լեռան լանջին,
Ուր կան խարույկներ ու արոտներ,
Ինչպես ցնորքներ ու մտքեր չնչին-
Ձգվում են մեղիկ արահետներ:

Մարդիկ են ահա այնտեղ հաճում,
Եվ արածում են այնտեղ գառներ,
Բայց ուղի՛ն, ուղի՛ն քո մահացու
Արահետներին դու չխառնես...

Չարենցը «սինթեզում է» միցշեական գերմարդու բաղադրիչները և ի վերջո կարծես պարզում, որ գերմարդ ավածը մի ճանապարհ է դեպի մարդը (այսինքն՝ մարդն է գերմարդուց ավելին), սակայն այդ կամուրջն անվերջ է, ինչպես իմացությունն ինքը: Նիցշեի գերմարդը, ընդհակառակը, հեռանում է մարդուց (այսինքն՝ գերմարդն է մարդուց ավելի) մի կամրջով, որն անցնում է անդունդի վրայով:

Մարդը պարան է կենդանու և գերմարդու միջև՝ անդունդի վրայով ձգված: Անցումը վտանգավոր է: Ծանապարհին գտնվելը վտանգավոր է: Ետ նայելը վտանգավոր է, վախն ու կանգառը վտանգավոր են: Իսկ անդունդն անխուսափելի է:

Ճ. ՆԻՑՇԵ, «Այսպես խոսեց Չրադաշտը»

Աշխատի՛ր, տոկա՛, անդադար, ստեղծիր անդուլ,-
դա կամուրջ է.

Դրանով ես շինում դու աշխարհքը, դրանով՝ քանդում,-
դա կամուրջ է.

Դրանով սերմանում ես կյանքեր, մեռնելով՝ հառնում դրանում,
Հուրհրա՛, խանդով իմաստուն ու խնդա՛ խնդուն,-
դա կամուրջ է:

Ե. ՉԱՐԵՆՑ, ոտրայաթ 39

Ահա երկու միանգամայն հակադիր մտեցում գերմարդու բնույթին և առաքելությա-
նը, որոնք տարբեր ուժգնությամբ դրսևորվում են Չարենցի և Նիցշեի ստեղծագործու-
թյան բազմաթիվ նմուշներում: Սակայն Չարենցի գերմարդու ողբերգական շեշտերը գնա-
լով ավելի են ուժեղանում, քանի որ հակադրությունն է մեծանում՝ հասնելով օտարացու-
մից ծնված ողբերգության: Ողբերգություն, որը, ցավոք, հետագայում դեռ պետք է դուրս
գար զուտ ստեղծագործության շրջանակներից և տարածվեր նաև բանաստեղծի կյանքի
ու մարդկային ճակատագրի վրա:

Н. А. КАЗАРЯН - Чаренц и Ницше: общее в мировосприятии. - Опираясь на тот факт, что в первый, символистский период своего творчества Егише Чаренц испытал заметное влияние немецкого философа-идеалиста Фридриха Ницше, автор в настоящей работе выявляет ряд общих черт в художественном мышлении, в принципах отображения действительности Чаренца и Ницше.

В частности, книга Ницше «Так говорил Заратустра» признается теоретической основой формирования философских взглядов Чаренца. Выделяя ту или иную философскую проблему (взаимоотношения личности и общества, цели и средства познания, тайна жизни и смерти), автор стремился показать как объединяющие двух мыслителей подходы к осмыслению этих проблем, так и обусловленные армянской действительностью, национальной судьбой и творческой индивидуальностью самого Чаренца его собственные философские оценки и обобщения.